600.0255.14.06.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2017 թվականի №255Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի №170Ա ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի №184Ա ՈՐՈՇՈՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №297Ն որոշումը և հաշվի առնելով ՀՀ արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության 2017 թվականի ապրիլի 20-ի №5103/9542-17 և հունիսի 2-ի №5103/11038-17 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2016 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №170Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությանը տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №1171 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «մեկ տարի» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի հունիսի

15-ը» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված №1171 ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) 2016 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №184Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությանը տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №1172 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «մեկ տարի» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի հունիսի 22-ը» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված №1172 ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 15-ից, իսկ 2-րդ ենթակետը՝ 2017 թվականի հունիսի 22-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
14 հունիսի 2017 թ.